

2010

Արդիական Տեխնոլոգիաների
Մասնագետների Ասոցիացիա

SS չափորոշիչներ

IT Standards

Association of Modern
Technologies Professionals



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
2. ԻՍՕ-Ի ՄԱՍԻՆ	3
3. ԻԷԿ-Ի ՄԱՍԻՆ	4
4. ԻՍՕ/ԻԷԿ 20000 (ISO/IEC 20000).....	5
5. ԻՍՕ /ԻԷԿ 27000 (ISO/IEC 27000)	5
6. ՏՏԵԳ® (ITIL®).....	6
7. ՄԳՇ (MOF).....	6
8. ԿԾԾԳ (ASL).....	6
9. ԲՏԾԳ (BISL).....	7
10. ՓԿՄ® (TMAP®)	7
11. ԱՀԾ (SCP).....	8



SS Չափորոշիչներ

1. Ներածություն

Կազմակերպությունները կիրառում են չափորոշիչներ և լավագույն փորձ (գործելակարգ) SS ծառայությունները բարելավելու համար: Առկա է շարունակական և աճող պահանջարկ հավաստագրերի համար, որոնք հիմնված են հետևյալ SS չափորոշիչների, լավագույն փորձի և ենթակառուցվածքների (շրջանակների) վրա.

- ԻՍՕ/ԻԷԿ 20000 (ISO/IEC 20000)
- ԻՍՕ /ԻԷԿ 27000 (ISO/IEC 27000)
- ՏՏԵԳ® (ITIL®)
- ՄԳՇ (MOF)
- ԿԾԾԳ (ASL)
- ԲՏԾԳ (BiSL)
- ՓԿՄ® (TMap®)
- ԱՀԾ (SCP):

2. ԻՍՕ-ի մասին

ԻՍՕ-ն (Ստանդարտացման Միջազգային Կազմակերպություն) հանդիսանում է միջազգային չափորոշիչների (ստանդարտների) աշխարհի ամենախոշոր մշակողը և հրատարակիչը:

ԻՍՕ-ն 163 երկրների ազգային չափորոշիչների ինստիտուտների ցանց է, որն ընդգրկում է մեկական անդամ յուրաքանչյուր երկրից, որի կենտրոնական գրասենյակը գտնվում է Շվեյցարիայի Ժնև քաղաքում:

ԻՍՕ-ն ոչ կառավարական կազմակերպություն է, որը կամուրջ է հանդիսանում պետական և մասնավոր հատվածների միջև: Մի կողմից, նրա անդամ ինստիտուտներից շատերը կազմում են իրենց երկրների պետական կառուցվածքի մի մաս, կամ լիազորված են իրենց կառավարության կողմից: Մյուս կողմից, մյուս անդամները հիմնավորված են բացառապես մասնավոր հատվածում՝ հիմնված արդյունաբերական ասոցիացիաների ազգային ընկերությունների (համագործակից) կողմից:



Հետևաբար, ԻՍՕ-ն հնարավորություն է տալիս ձեռք բերել համաձայնություն՝ հիմնված լուծումների վրա, որոնք բավարարում են և՛ բիզնես պահանջներին, և՛ հասարակության ավելի լայն կարիքներին:

Կազմակերպության անվանումն ընտրելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ անվանումը բոլոր լեզուներով հնչի նույնը: Քանի որ «Ստանդարտացման Միջազգային Կազմակերպությունը» կունենար տարբեր հապավումներ տարբեր լեզուներում, («IOS» անգլերենում՝ *International Organization for Standardization*-ի, «OIN» ֆրանսերենում *Organisation internationale de normalization*-ի համար), նրա հիմնադիրները որոշեցին տալ նաև մի կարճ, ունիվերսալ անուն:

Այդ իսկ պատճառով ընտրվել է «ISO», որը ծագում է հունական «isos» բառից, որը թարգմանաբար նշանակում է «հավասար»: Ստանդարտացման միջազգային կազմակերպության անվանումը բոլոր լեզուներով հնչում է ISO (ԻՍՕ): Ստանդարտացման միջազգային կազմակերպության պաշտոնական լեզուներն են անգլերենը, ֆրանսերենը և ռուսերենը:

3. ԻԷԿ-ի մասին

ԻՍՕ-ի գործունեությունը տարածվում է տնտեսության բոլոր ճյուղերի վրա, բացառությամբ էլեկտրատեխնիկայի և էլեկտրոնիկայի, որոնք գտնվում են Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովի (ԻԷԿ, IEC: International Electrotechnical Commission) հիմնական գործունեության շրջանակում:

Որոշ աշխատանքներ կատարվում են այս երկու միջազգային կազմակերպությունների համատեղ ջանքերով: Ստանդարտացման ոլորտի և տեղեկատվական տեխնոլոգիաների հետ կապված աշխատանքները կանոնակարգելու նպատակով Ստանդարտացման միջազգային կազմակերպության և Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովի կողմից ստեղծվել է ԻՍՕ/ԻԷԿ ՄՏՀ (ՉՏԿ) 1 «Տեղեկատվական Տեխնոլոգիաներ» միավորված տեխնիկական հանձնաժողովը:

Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովը (ՄԷՀ) շահույթ չհետապնդող ոչ կառավարական ստանդարտացման միջազգային կազմակերպություն է, որը ստեղծվել է 1906 թվականին: Կենտրոնական գրասենյակը գտնվում է Շվեյցարիայի Ժնև քաղաքում:

Կազմակերպությունը մշակում և հրատարակում է միջազգային չափորոշիչներ (ստանդարտներ), որոնք վերաբերվում են էլեկտրական, էլեկտրոնային և դրանց հարակից տեխնոլոգիաներին, որոնք ընդհանուր կոչվում են «էլեկտրատեխնոլոգիա»:

Միջազգային չափորոշիչները (ստանդարտները) տարածվում են տեխնոլոգիաների հսկայական մի շարքի վրա՝ սկսած էլեկտրաէներգիայի արտադրությունից, մատակարարումից, բաշխումից մինչև կենցաղային և գրասենյակային սարքավորումներ, կիսահաղորդիչներ, մանրաթելային օպտիկա, մարտկոցներ, արևային էներգիա, նանոտեխնոլոգիա և այլն:



Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովը ղեկավարում է համապատասխանության գնահատման երեք համակարգ, որոնք հավաստում են, թե արդյոք սարքավորումը, համակարգը կամ բաղադրիչը համապատասխանում են միջազգային չափորոշիչներին:

4. ԻՍՕ/ԻԷԿ 20000 (ISO/IEC 20000)

Ստանդարտցման միջազգային կազմակերպություն/ Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողով

Հապավում

ԻՍՕ/ԻԷԿ 20000 Լոգո

ԻՍՕ/ԻԷԿ 20000



ԻՍՕ/ԻԷԿ 20000-ը SS ծառայության կառավարման որակի միջազգային, անկախ չափորոշիչ է: Չափորոշիչ, որ կազմակերպություններին հնարավորություն է տալիս հավաստիացնել պատվիրատուներին, հաճախորդներին SS ծառայությունների որակի համար, և ստեղծել ու սպասարկել SS ծառայության կառավարման համակարգ, որը համապատասխանում է միջազգային ԻՍՕ/ԻԷԿ 20000 որակի պահանջներին:

Այս չափորոշիչի առկայությունը կստեղծի զգալի մրցակցային առավելություն, քանի որ պատվիրատուները, հաճախորդները պահանջում են բարձրորակ SS ծառայություններ: Այս կազմակերպություններին անհրաժեշտ են SS մասնագետներ, ովքեր ունեն ԻՍՕ/ԻԷԿ 20000 հավաստագրեր:

5. ԻՍՕ /ԻԷԿ 27000 (ISO/IEC 27000)

Ստանդարտցման միջազգային կազմակերպություն/ Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողով

Հապավում

ԻՍՕ/ԻԷԿ 27000 Լոգո

ԻՍՕ/ԻԷԿ 27000



27000 շարքի միջազգային և անկախ ԻՍՕ/ԻԷԿ չափորոշիչներն ապահովում են տեղեկատվական անվտանգության լավագույն փորձ (գործելակարգ) և պահանջներ: ISO/ՄԷՀ 27002-ը նորմեր և կանոններ են (նախկինում համարակալված ISO/ՄԷՀ 17799): Այն տրամադրում է տեղեկատվական անվտանգության կառավարման լավագույն փորձի առաջարկներ նրանց համար, ովքեր պատասխանատու են տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգեր նախաձեռնելու, իրականացնելու կամ սպասարկելու համար:



6. ՏՏԵԳ® (ITIL®)

ՏՏ ենթակառուցվածքի գրադարան

Հապավում

ՏՏԵԳ® Լոգո

ՏՏԵԳ®



ՏՏ ենթակառուցվածքի գրադարանը ՏՏ ծառայության կառավարման լավագույն փորձի (գործելակարգի) հավաքածու է: ՏՏԵԳ® հարմար է յուրաքանչյուրին, ով ներգրավված է ՏՏ ծառայությունների տրամադրման (մատուցման) կամ աջակցության գործում: Անկախ նրանից, թե դուք առօրյա ՏՏ ծառայություններ եք կառավարում, թե հաստատում և կատարելագործում եք գոյություն ունեցող գործընթացները, ՏՏԵԳ® կարող է օգնել Ձեզ կիրառել միջազգայնորեն ապացուցված լավագույն փորձը (գործելակարգը) ՏՏ ծառայությունների և ընկերության տրամադրած աջակցության համար:

7. ՄԳՇ (MOF)

Մայքրոսոֆթ գործառնությունների շրջանակ

Հապավում

ՄԳՇ Լոգո

ՄԳՇ



Մայքրոսոֆթ գործառնությունների շրջանակը ՏՏ ծառայության գործառնությունների կառավարման և ՏՏ բաժնի ամենօրյա պարտականությունների ՏՏ ծառայության կառավարման գործընթացի միջազգային չափորոշիչ է: Հիմնված լինելով ՏՏԵԳ-ի և Մայքրոսոֆթի միջավայրի լավագույն փորձի (գործելակարգի) վրա՝ ՄԳՇ-ի նպատակն է կազմակերպել գործառնական ՏՏ կառավարում այնպես, որ բիզնեսը կարողանա վստահել ծառայությունների բարձր մատչելիությանը, որը հիմնված կլինի ՏՏ համակարգերի հուսալիության և վերահսկման վրա:

8. ԿԾԾԳ (ASL)

Կիրառական ծրագրերի ծառայությունների գրադարան

Հապավում

ԿԾԾԳ Լոգո

ԿԾԾԳ





Կիրառական ծրագրերի ծառայությունների գրադարանն առաջարկում է կիրառական ծրագրերի կառավարումը կազմակերպելու ենթակառուցվածք (շրջանակ): Կիրառական ծրագրերի կառավարումը վերաբերում է վերահսկման, սպասարկման և կիրառական ծրագրերի նորարարության կառավարմանը (կիրառական ծրագրեր և տվյալների շտեմարանի կառուցվածքներ), որը ոլորտում բավականին լավ դիտարկված է: Կիրառական ծրագրերի ծառայությունների գրադարանն ընդգրկում է.

- ԿԾԾԳ բոլոր գործընթացների ընդհանուր գործընթացի նկարագրություններ, իր մեջ պարունակվող գործընթացների ներդրումների և արդյունքների, գործընթացների շրջանակներում իրականացվող գործունեության, գործընթացների և ներգրավված անձանց դերերի փոխադարձ հարաբերությունների նկարագրությամբ (առաջադրանքներ, լիազորություններ, պարտականություններ)
- կարևոր փաստաթղթերի ձևանմուշներ, ինչպիսիք են՝ տարեկան պլաններ, վերահսկման պլաններ, ծառայության մակարդակի համաձայնագրեր, ֆայլեր, պայմանավորվածություններ, ընթացակարգեր և այլն:
- և այլն:

9. ԲՏԾԳ (BiSL)

Բիզնես տեղեկատվական ծառայությունների Հապավում գրադարան

ԲՏԾԳ Լոգո



Կազմակերպություններին, իրենց բիզնես տեղեկատվության կառավարման բարելավման գործում աջակցելու համար, հասանելի է հանրային տիրույթի գործընթացի մոդելը (domain process model)՝ Բիզնես տեղեկատվական ծառայությունների գրադարան: ԲՏԾԳ-ը նկարագրում է բիզնես տեղեկատվական կառավարման գործառնության առաջնային գործընթացները ռազմավարության, կառավարման և գործառնությունների մակարդակներում:

10. ՓԿՄ® (TMap®)

Փորձարկման կառավարման մոտեցում

Հապավում

ՓԿՄ® Լոգո





Ծրագրային ապահովման որակի բարելավումը կարևոր է և միշտ կլինի կարևոր: Ի վերջո, հնարավոր չէ ամբողջությամբ զերծ մնալ թերություններից: Փորձարկման կառավարման մոտեցումը կարևոր և ստանդարտացված մեթոդ է յուրաքանչյուրի համար, ով փորձում է հասկանալ, թե ինչպես է բիզնեսի վրա հիմնված փորձարկման կառավարումը համապատասխանում բիզնեսի վրա հիմնված զարգացման վերջը վերջին (end-to-end) գործընթացի համատեքստին: ՓԿՄ® SS լուծման որակը հավաստիացնող կարևոր գործիքներից մեկն է:

Եվրոպայում ՓԿՄ® ներկայացվել է 2003 թ.: Այս մոտեցումը վերջերս թարմացվել, թարգմանվել և տեղայնացվել է անգլերենով, և արդյունքում հավաստագրման ծրագրի նկատմամբ առկա է հետաքրքրություն զգալի աճ, չափորոշիչի միջազգային ընդունման հետ մեկտեղ: Համակարգված փորձարկումը բիզնեսի վրա հիմնված մոտեցման հետ համատեղ ծախս-արդյունավետ է և կարող է հաճախ համապատասխանեցել արտաքին արդյունավետ կանոնների և կանոնակարգերի հետ:

11. ԱՀԾ (SCP)

Անվտանգության հավաստագրված ծրագիր

Հապավում

ԱՀԾ® Լոգո

ԱՀԾ®



Անվտանգության հավաստագրված ծրագիրը տրամադրում է համապարփակ ցանցային անվտանգության ծրագիր, որը ստուգում է թեկնածուների և՛ տեսական գիտելիքները, և՛ պրակտիկ հմտությունները տեղեկատվական անվտանգության ոլորտում: ԱՀԾ® առաջարկում է բազմաբնույթ մակարդակով, չեզոք հավաստագրող մարմնի կողմից տրամադրվող, անվտանգության վերապատրաստման ծրագրեր, որը հնարավորություն է տալիս SS անձնակազմին, բոլոր մակարդակներում, ձեռք բերել աշխատանքի անհրաժեշտ հմտություններ և ստանալ հավաստագրեր: